

## ԸՆԴԴԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Մարինե Դավթի Ղազարյանի «Հակոբ Օշականի փոքր արձակը. հոգևորի և բնագոյայինի խնդիրը» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Վերջին ժամանակներս՝ հատկապես Հայաստանի անկախության տասնամյակներին, գրականագիտությունն սկսել է պատշաճ ուշադրության արժանացնել իր կենսագրության բուռն սկզբով արևմտահայ, արդյունավետ գործունեությամբ՝ սփյուռքահայ մեծագույն գրագետ, Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում և սփյուռքի այլ կրթօջախներում հայ և ընդհանուր գրականության երկարամյա ուսուցիչ, գրող, գրականագետ ու քննադատ Հակոբ Օշականի գրականագիտական և գեղարվեստական ժառանգությանը: Սփյուռքում հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի հայ գաղթավայրերում Երուսաղեմում, Հալեպում ու Բեյրութում, նա մեծագույն գրական հեղինակությունն էր, որին Խորհրդային Հայաստանում «երկաթե վարագույրն» արգելում էր հաղորդակցվել: Այդ իսկ պատճառով Հայաստանի հայությունը տևական ժամանակ զրկված էր նրա հոգեմտավոր հսկայական հարստությանը հաղորդակցվելուց: Հ. Օշականի ստեղծագործությանն այժմ բարեբախտաբար հանախ է արժանանում գրականագիտական քննության, և Մ. Ղազարյանի սույն ատենախոսությունը դրա դրսևորումներից է:

Պետք է նկատենք, սակայն, որ Հ. Օշական գրականագետ-քննադատն իր «Համապատկեր արևմտահայ գրականության» բազմահատորյակով, գրականագիտական մյուս աշխատություններով ու քննադատական ելույթներով ավելի է ճանաչված ու գնահատված, քան Հ. Օշական արվեստագետ գրողը, որին հանրությունն առավելապես գիտի «Խոնարհներով» ու ծավալուն «Ծանր վեպերով»՝ «Ծակ պտուկ», «Հաջի Աբդուլլահ», «Մյուլեյման էֆենդի» և այլն:

ԵՊՀ նորագույն հայ գրականության ամբիոնը այս թեման հանձնարարել է նրա արդիականության և ուսումնասիրման անհրաժեշտության հստակ գիտակցումով, Հ. Օշական գրողի մասին պատկերացումներն ընդլայնելու նպատակադրմամբ, մասնավորապես որ նրա փոքր արձակը, «Խոնարհները» շարքի պատմվածքներից բացի, գրականագիտական աշխատություններում պատշաճ ուշադրության և գիտական լիարժեք բնութագրման չի արժանացել:

Գիտական աստիճանի հավակնորդ երիտասարդ գրականագետն այժմ մեր դատումին է ներկայացրել գիտական որոշակի կշիռ ունեցող լուրջ աշխատանք: Հ. Օշականի գրական ողջ ժառանգության, սփյուռքահայ գրական մամուլի և թեմային առնչվող հայերեն և

օտարալեզու գիտատեսական, գեղարվեստական, փիլիսոփայական ու գեղագիտական գրականության ուսումնասիրությամբ (նկատի ունենք Հիպոլիտ Թենի *ցեղ – միջավայր – պահ* բանաձևը և հոգեկանի էության մասին Չիգմունդ Ֆրոյդի ուսմունքն ու հոգեվերլուծության սկզբունքները, որոնք գործածել է Հ. Օշականը թե՛ գեղարվեստական, թե՛ գրականագիտական գործերում) նա կատարել է գրողի ամբողջ փոքր արձակի գիտական համակողմանի քննություն՝ իր խնդիրը համարելով նաև այդ բնույթի երկերում արծարծված հոգևոր և բնագոյային երևույթների, կերտած գրական կերպարների ներաշխարհում դրսևորված անգիտակցականի և նրանց վարքագծի հոգեախտաբանական զանազան հակումների ու դրսևորումների մեկնությունը: Սա էլ հենց ատենախոսության գիտական նորույթն է և թեմայի արդիականության հավաստագրումը, որը հաստատվում է ատենախոսության բովանդակությամբ ու կառուցվածքով ներածություն, երեք գլուխներ, եզրակացություններ և օգտագործված գրականության ցանկ: Կառույցն ավանդական է և ներկայացվող պահանջներին համապատասխան:

Ներածության մեջ ատենախոսության գիտական նորույթն ու թեմայի արդիականությունը մատնանշելու հետ միասին ներկայացվում են նաև թեմայի հիմնավորվումը, հետազոտության մեթոդաբանությունը, տրվում են հարցի պատմությունն ու թեմայի մշակվածության աստիճանը, սրանց հետ էլ հստակորեն պարզաբանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Բուն շարադրանքը ներկայացվում է երեք գլուխներով, որոնք տրամաբանական հաջորդականությամբ շաղկապված են և ներկայացնում են Հ. Օշականի գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքը և ամբողջացնում ուսումնասիրությունը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Ժողովրդական բանարվեստի և կենդանի ավանդույթի համապատկերը», երկու ենթաբաժին ունի՝ «Բարքերի ու սովորույթների համապատկերը» և «Բանահյուսական պատմությունը՝ բնաշխարհի քնարական պատկեր»:  
Ի դեպ, այս խոսուն վերնագրերը պատահական չեն և սերտորեն առնչվում են օշականյան գրական մտածողությանը: Բարքերի պատկերումը նա միշտ էլ համարում էր որևէ գրողի խոշորագույն արժանիք. իր ամենասիրելի հայ գրողի՝ Հ. Պարոնյանի համար էլ նույնն էր ասում. «Պարոնյան մեզի բերավ բարքերու բարիքը»:

Առհասարակ, Մ. Ղազարյանի ատենախոսության գիտական «հենարանները» իր դեկավարը՝ մեծավաստակ ու բարեխիղճ պրոֆեսոր Վ. Գաբրիելյանն է և Օշական ուսումնասիրած նախորդ գրականագետները՝ ինքը՝ Հ. Օշականն իր «Համապատկեր արևմտահայ գրականության» բազմահատորյակն ու մանավանդ ինքնաբնութագրական 10-րդ հատորը,

Կ. Աղաբեկյան, Ս. Դանիելյան, Գր. Պըլտյան, Շ. Տասնապետյան, հայ և օտար ուրիշ գրականության պատմաբաններ ու տեսաբանաներ: Նրանք են ուղղորդել ատենախոսին սույն ուսումնասիրությունը կատարելիս, բայց նրանք ընդամենը ուղղորդել են ու կողմնորոշել. բուն աշխատանքը կատարվել է ինքնուրույն և հասուն գրականագետի հայացքով, բարեխիղճ ու համառ հետևողականությամբ: Իսկ սա նույնպես խոշոր առավելությունն ու գնահատելի արժանիք է:

Ատենախոսի ինքնատիպ մտածողությունը նկատվում է հենց սկզբից՝ առաջին իսկ գլխում «Խոնարհները» և «Խորհուրդներու մեհյանը» շարքերի պատմվածքների, այսպես կոչված «հեքիաթների» և արձակ բանաստեղծությունների քննաբանելումներում:

Մ. Ղազարյանը չի գնացել դիպաշար վերապատմելու, առանձին կերպարներ վերլուծելու համեմատաբար դյուրին ուղիով, պարզունակորեն չի էլ ասում, թե այսինչ պատմվածքում այն է պատկերել, այնինչում՝ այն: Հայահոծ գյուղը պատկերող օշականյան երկերը նա դիտարկում է որպես թուրքական բռնության և աղքատության ճիրաններում չարչրկվող հայ կյանքի բարձրարվեստ համայնապատկեր, և լավ է, որ նրան գյուղագիր չի համարել ավանդական իմաստով ինչպես սովոր են գյուղ պատկերող բոլոր գրողներին անխտիր գյուղագիր անվանողները նման: Այո՛, Օշականն էլ է գյուղ պատկերել, սակայն նա ո՛չ գավառագիր է, ո՛չ էլ գյուղագիր, այլ, իր իսկ դասակարգումով՝ չորրորդ՝ արվեստագետ սերնդի ներկայացուցիչ: Հայցորդն այս չափանիշով էլ գնահատել է նրա պատմվածքների շարքերը, իսկ դրանց բաղադրիչները, որպես ինքնուրույն գեղարվեստական միավորներ, դիտարկել է ընդհանրության մեջ և քննաբանող այնպիսի հայացքով, որ դրանք դասակարգվել ու խմբավորվել են թեմատիկ-գաղափարական հիմքով, ըստ ժանրային յուրահատկությունների ու պատումի արվեստի, հարցադրումների և գեղագիտական նպատակադրումների, իսկ կերպարները, որոնք դիտարկված են հաջորդ գլխում, և որոնց կանդրադառնանք ստորև, բնութագրված են որպես պատկերվող միջավայրի և կենսապայմանների հարազատ ծնունդների գեղարվեստական ինքնատիպ մարմնավորումներ:

Այսպես, խոսելով գյուղաշխարհի պատվաբեր մասնագիտությունների մեկի՝ հովվության մասին՝ ատենախոսը էջ 22-ում գրել է. «Հովիվները գարնանը՝ Չատկի տոնից հետո, բարձրանում էին սարերը և ուշ աշնանը իջնում սարերից: Հովվության այս ձևը ավելի պատվաբեր էր: Ամառ-ձմեռ հոտից չբաժանվող այս տղաներն իրենց արժանիքներով զիջում էին «պաշտոնավարման» որոշակի ժամկետով զբաղվող հովիվներին: Կանայք շահագրգռված չէին նրանց աղջիկ տալու: Նրանք կարծում էին, որ շարունակ լեռներում ապրող տղաները կորցնում են նույնիսկ խոսելու ունակությունը («Թուրքմենին աղջիկը», «Հին

պատմություն», «Համբույրի մը պատմությունը»): Փակագծում նշված են այն երկերի վերնագրերը, որոնք հատկանշվում են վերոհիշյալ առանձնահատկություններով: Նույն կերպ են բնութագրվել առանձին մի խումբ կազմող այն պատմվածքները, որոնք պատկերում են գյուղաշխարհի ամուսնական բարքերը, աղջնակների՝ գյուղում ուտաբոբիկ կամ գյուղից դուրս գալիս նոնագույն գուլպա և կոշիկ հագնելը, երիտասարդների սերը և նշանված կամ դարձ գնացող աղջիկներին բնութագրելը. «Իսկ եթե հարս գնացած աղջիկը անարատ էր,– կարդում ենք ատենախոսության մեջ,– դարձ գնալիս մայրը նրան դիմավորում էր մեծ հպարտությամբ՝ մեջքին ոսկեճամուկ գոտի կապած («Դարձը», «Շահպագ», «Խենթ - Սողմեն», «Աղցանը»): Փակագծում դարձյալ նույն երևույթը պատկերող երկերի վերնագրերն են:

Իսկ դեռահասները, որոնց կարևորության գիտակցումով կերպավորել է Հ. Օշականը, ակնառուի, տեսանելիի հետ միասին թե՛ իրական կյանքում և թե՛ գեղարվեստական պատկերում ունեն բազմաթիվ անտեսանելի հոգեբանական ներքին խնդիրներ, որոնք ատենախոսը բացահայտել է Սենտ Բյովի, Շլայերմախերի, Ֆրոյդի, Հիրշի և հոգեվերլուծական հերմենևտիկայի հանցակարգերի համադրական քննությամբ:

Ատենախոսության էջերում մեր ուշադրությունը գրավեց մի հեաքրքիր գուգադրություն ևս. Հ. Օշականի կերպավորած պատանիների սեռական հասունացման և հակադարձ սեռի միջոցով ինքնաճանաչման երևույթը բնութագրելիս նա անդրադարձել է Պռոշյանի «Հացի խնդիր» վեպի «Դրիջակ» գլխին. դրիջակը պատի մեջ բացված այն անցքն էր որով վտանգի պահին իրականացվում էր երկու հարևան տների հաղորդակցությունը, բայց հանախ դանում էր դեռահաս հարևանների գաղտնի հաղորդակցության և սիրո խոստովանության միջոց: Այդպես էր Պռոշյանի վեպի հերոսուհի Հեղնարի պարագայում: Սակայն պարզվում է, որ այդ անցքը միայն Աշտարակին չէ բնորոշ. ճիշտ այդպիսի մի անցք է նկարագրել և Հ. Օշականը, որի վերաբերյալ Գր. Պըլտյանի բացատրություններին արձագանքել և իր մեկնաբանությունն է հավելել Մ. Ղազարյանը (տե՛ս էջ 75):

Հ. Օշականն իր գիտամանկավարժական գործունեությամբ և գեղարվեստական ստեղծագործությամբ ծառայել է հայության շահերին, տարանջատված հայ հատվածների հոգևոր միասնության «մեհյանական» մտածողության ընդգծումով, որը բնորոշ էր 1914 թ. Պոլսի հեթանոսական «Մեհյան» հանդեսի խմբագրակազմին՝ Կ. Չարյան, Գ. Բարսեղյան, Հ. Քյուֆենյան – Օշական, և հանդեսին աշխատակցած մյուս հեղինակներին՝ Դ. Վարուժան, Ռ. Չարդարյան, Լ. Շանթ, Հ. Նազարյան, Հ. Մնձուրի և ուրիշներ:

Այս գլխում հայցորդն իրավացիորեն անդրադարձել է նաև «Խորհուրդներու մեխ-  
յանը» շարքի «Հեքիաթներ» ենթաբաժնի երկերին և բովանդակային արժևորման հետ  
միասին արել տեսական բնույթի ճշգրտումներ նրանց ժանրի վերաբերյալ:

Հ. Օշականի ժամանակներում դեռևս հստակորեն սահմանազատված չէին գրական  
ժանրերը, որոնց ներթափանցումները խնդրումների և շփոթությունների տեղիք են սովել:  
Դրանք աստիճանաբար շտկվել են հետագայում՝ տեսության գիտանյութի զարգացման  
ընթացքում: Չհստակվածության հետևանքով էր, որ Դոռոշյանն իր տպագրված վեպը  
հոդված էր անվանում, անգամ Թումանյանի և Իսահակյանի համար դեռևս դժվար էր  
տարբերակել ավանդազրույցը, լեգենդը, բալլադը, առակը, հեքիաթը, պոեմը, Հ. Օշականն  
ինքն էլ «Համապատկերի» 8-րդ հատորում Եր. Օսյանին նվիրված գլխում, «Համբարձում  
աղա» երկն անվանել է վեպ, վիպակ, քրոնիկ, նորավեպ: Եվ միևնույն երկին տրված այս  
տարբեր ժանրանուններն էլ միևնույն էջում են: Ուրեմն՝ Հ. Օշականը «Խորհուրդների  
մեխյան»-ում «հեքիաթ» ժանրանունը պայմանականորեն է գործածել՝ հեքիաթային տար-  
րերով *սովորական պատմություն, գրույց* իմաստով, ինչպես որ Վ. Սարոյանը «խաղ» էր  
անվանում բոլոր թատերգական-դրամատիկական գործերը:

Ուստի ընդունելի պետք է համարել հայցորդի այն ձևակերպումը, թե Օշականի  
բնորոշած հեքիաթ ժանրանունը չպետք է հասկանալ գրական - բանահյուսական ժանրի  
իմաստով: Ավելին՝ այս կապակցությամբ համադրելով Մ. Բախտինի, Վ. Խալիզևի, նույն  
Օշականի, Վ. Գաբրիելյանի, Կ. Աղաբեկյանի, Ն. Չարխուսյանի կարծիքները՝ աստենա-  
խոսն ավելի հստակեցնում է օշականյան հեքիաթների էությունը՝ պատմվածքներում,  
արձակ բանաստեղծություններում, նորավեպերում տեսնելով գրույցը, ավանդությունը,  
տեղանվան ծագումնաբանությունն ու ժողովրդական տոները հեքիաթի նմանությամբ  
ներկայացնելու հեղինակային միտումը: Մ. Ղազարյանը օշականյան մի քանի «հեքիաթ-  
ների»՝ «Կաղանդի պատմություն», «Կաղանդ գիշերով» և մանավանդ իր նախընտրած  
«Կաղանդի հեքիաթ» սքանչելի երկի դիպուկ վերլուծությամբ ցույց է տվել, որ նրանցում  
պատկերված են հենց գրողի վաղ մանկության հեքիաթանման գունագեղ երազանքները,  
որոնք ներկայացված են մանկական հոգեբանության նուրբ ու խոր դիտարկումներով:

Գիտական աստիճանի հայցորդը նույն քննախույզ հայացքով հաջորդ գլխում  
դիտարկել է Հ. Օշականի փոքր արձակի կերպարային համակարգը՝ դրանք իրավացիորեն  
բնութագրելով որպես ժամանակի հայ գյուղական իրականության մարդկային հարաբերու-  
թյունների, սոցիալական, ազգային-քաղաքական, մշակութաբանական խնդիրների բարձր-  
արվեստ մարմնավորումներ:

Բոլոր ճշմարիտ գրողների պես Հ. Օշականն էլ իր երկերի նյութը վերցրել է կյանքի քառսից ու կարգաբերել այն գեղարվեստական երկում: Բուն իրականության քառսից է նա վերցրել նաև իր հերոսներին, որոնց կերպավորել է տարբեր ստեղծագործություններում: Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Հերոսների դրաման փոքր արձակում», երեք աստիճանավորում ունի. առաջինը՝ ««Փոքր մարդու» դրաման գրողի դիտակետում», երկրորդը՝ «Գեներների սոցիալական հոգեբանությունը «Խոնարհները» պատմվածաշարում» և երրորդը՝ «Դեռահաս հերոսների հասունացման հոգեբանական նրբերանգները»:

Գրողն առանձնահատուկ դիտողականությամբ է ճանաչում կենսական երևույթներն ու մարդկային բնավորությունները. դրանով է նա դառնում, Օշականի ասած, «իրավ արվեստագետ», որն ստեղծում է տիպեր ու կերպարներ, ձևավորում իր գեղարվեստական աշխարհը: Երկրորդ գլխի նշված երեք ենթաբաժիններում էլ ատենախոսը դիտարկել է Օշականի հերոսներին, փորձել մեկնաբանել նրանց կենսական ակունքները, մարդկային տեսակն ու բնավորությունը, կերպավորման արվեստի յուրահատկությունները: Այստեղ ևս դրսևորվել են ատենախոսի՝ գրական երևույթներն իրենց զարգացման ընթացքի, տարաբնույթ կապերի և առնչությունների մեջ դիտարկելու կարողությունները: Նրա արդարացի համոզմամբ՝ Հ. Օշականը որպես գրող ինքնակա, մեկուսացած երևույթ չէր, նրա գրական մտածողությունը, որքան էլ բնաբուխ և ինքնատիպ, առնչակից էր հիպոլիտենյան հայտնի կարգախոսին, փիլիսոփայության, հոգեվերլուծության և արվեստի տեսության հին ու նորագույն ուսմունքներին և մանավանդ իր միջավայրին ու ժամանակին: Համոզիչ են 80-ականների իրապաշտ շարժման՝ կյանքի ճշմարտացի պատկերման սկզբունքի և հատկապես Երուխանի ու նրա 1910 թ. լույս տեսած «Կյանքին մեջ» գրքի հետ աղերսների բացահայտումները, որոնցով ավելի ընկալելի են դառնում օշականյան հերոսները՝ «որոշակի ժամանակում, որոշակի վարքուբարքով ապրող մարդիկ»՝ «քոքուրներն» ու «հորքուր Վարդանները»: Սակայն չգիտես ինչու՝ հայցորդը վերցրել է շղթայի միայն վերջին օղակը՝ «մոռանալով» Գր. Չոհրապի «Կյանք ինչպես որ է» - ն և Արփիարյանի «Կյանքի պատկերներ»-ը: Փոքրիկ այս բացթողումն անմիջապես նկատվում է որևէ պակասություն չհանդուրժող աշխատանքում: Պետք է ասենք նաև, որ Օշականի գործածած *խոնարհ, հեզ, հյու* բառերը սոսկական բառային հոմանիշներ չեն. հնարավոր է՝ նա նկատի է ունեցել Եվրոպայի խոշորագույն գրողներից մեկի՝ ֆրանսիական թատրերգության մեջ սիմվոլիզմի հիմնադիր Մ. Մետերլինկի՝ 1896 թ. հրատարակած «Հեզերը» կամ «Հեզերի գանձը» երկը՝ «Խոնարհները» վերնագիրն ընտրելիս:

Ընդունելի ենք համարում օջականյան պատանի հերոսների՝ ատենախոսի բնութագրումները, որոնցով առավել ընկալելի են դառնում դեռահասների սեռական հասունացման ընթացքում նրանց կենսագագացողությունն ու հոգեկան դրամատիկ ապրումները: Առանձնապես հաջողված է «Երբ պատանի են» վիպակի վերլուծությունը, որով բնորոշվում է ինքնակերպավորված հեղինակ Հ. Օջականն ինքը:

Ատենախոսության կարևոր մասերից է երրորդ գլուխը՝ «Եղեռնի արձագանքը փոքր արձակում» վերնագրով: Ծնունդով բուրսացի Հ. Օջականը, որ վաղուց Պոլսում հաստատված մտավորական էր, ինքն էլ է անցել հայոց ցեղասպանության սարսափների միջով, կիսել միլիոնավոր զոհերի և հատուկենտ փրկվածների ճակատագիրը: Օտյանի և մյուսների նմանա էլ կարող էր կրկնել աստվածաշնչյան մարգարեի խոսքը՝ «Ես այն մարդն եմ, որ տառապանքը տեսա»: Որպես ցեղասպանությունից վերապրող վկա և ականատես կամ «մնացորդաց»՝ Հ. Օջականն անմիջական տպավորություններով է հյուսել եղեռնապատումի իր երկերը, որոնցում հայոց անպատմելի ողբերգության հետ միասին ջանացել է առանց անունը տալու բացահայտել ցեղասպանության ոճրագործությունն իրականացնող, արյան ու թալանի սովոր գազանաբարո թուրք սերունդների հոգեբանությունն ու էությունը:

Ատենախոսն իր համակարգված մտածողությունն ու գրական բարձր գրագիտությունը դրսևորել է նաև 1922 թ. «Խորհուրդներու մեհյանի» «Մահվան ծաղիկներ» շարքի երկերը գնահատելիս: Առաջին մասում նա նախ՝ եղած կարծիքների համադրությամբ (Պ. Մնապյան, Մ. Նշանյան և այլք) պարզել է սեփական ստեղծագործությունը ուրիշին վերագրելու գրական հնարանքի առեղծվածը և համոզորեն հիմնավորել երկի պատկանելությունը Հ. Օջականի գրչին, ապա՝ քննել է նրա ժանրային, դիպաշարային-բովանդակային բնույթը, «Մեհյանի» էջերում ծավալված գրական – տեսական, ազգային գաղափարների վերարձարծումները, սիմվոլիզմի, դադաիզմի և նորագույն այլ հոսանքների հետ առնչությունները և հունական առասպելաբանության շերտերի դրսևորումները: Խոստովանենք՝ սա դյուրությամբ լուծվող չէր, և միաժամանակ արձանագրենք, որ գրական բարդ խնդիրներն ատենախոսության մեջ ստացել են գիտական համոզիչ լուծումներ:

Երկրորդ մասը՝ «Եղեռնի գեղարվեստական արձագանքը» ենթախորագրով, քննում և արժևորում է դարի մեծ ոճրագործությունը պատկերող «Կայսերական հաղթերգություն» շարքը կազմող երկերը:

Մովորաբար ընդդիմախոսները ատենախոսության գիտական արժանիքների կողքին մատնանշում են նաև նկատված թերություններ և վրիպումներ: Վերևում մենք էլ նկատեցինք ատենախոսության գիտական արժեքն ամենևին չսովորող մի բացթողում: Դարձյալ

խոստովանենք, որ այս դեպքում գիտական արժանիքներն այնքան են առատ, ցայտուն ու գերակա, ատենախոսությունն այնքան է հարուստ ու բովանդակալից, որ թերությունների մասին խոսելն ավելորդ է: Կարևորն այն է, որ սույն ատենախոսությամբ Հ. Օշական գրողը և մանավանդ նրա փոքր արձակը երևում են նոր յույսով ու նոր կողմերով:

Ամփոփենք: Ատենախոսության հարցադրումները, վերլուծության մեթոդներն արդիական են, կառուցվածքը՝ կուռ, գիտական ոճն ու լեզուն՝ օրինակելի, շարադրանքից բխող եզրահանգումները՝ տրամաբանական ու համոզիչ: Ատենախոսության հիմնադրույթներն ու բովանդակությունն արտացոլված են սեղմագրում և ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականներում: Ատենախոսությունն իր գիտական արժանիքներով լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նման աշխատանքներին ներկայացվող պահանջները: Այս հիմքով էլ միջնորդում ենք ԲՈԿ-ի ԵՊՀ-ում գործող Գրականություն 012 մասնագիտական խորհրդին՝ Մարինե Դավթի Ղազարյանին շնորհելու իր հայցած՝ Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա արժանի է անվերապահ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՄԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆ. Ս. Պ. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝  
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան՝



Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ  
Բ. գ. դ., պրոֆեսոր

18.06.2023թ.